ԵՐԵՎԱՆԻ ԱՇՏԱՐԱԿՆԵՐՆ ՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Աշտարակները վերձիգ համաչափություններով կառույցներ են, որոնց բարձրությունն անհամեմատ գերազանցում է հորիզոնական չափերին: Աշտարակները լինում են փայտե, քարե, երկաթբետոնե, և պողպատակերպ: Սկզբնական շրջանում աշտարակները կառուցվել են պաշտպանական, պահակադիտական նկատառումներով: Հայտնի են նաև բերդապարիսպների ազդանշան տալու (փարոսներ) աշտարակներ: Ավելի ուշ կառուցվել են իբրև պաշտամունքային զանգակատներ, մինարեթներ, հաճախ քաղաքային ժամացույցներով և այլ ճարտարապետական շինություններով: Շրջակա կառույցներից բարձր հորինվածքով արտահայտիչ ու դինամիկ աշտարակները հաճախ լինում են անսամբլի բարձրակետը և դառնում քաղաքի յուրատեսակ խորհրդանիշը:

Երևանի Առեղծվածային աշտարակը



Հին Երևանի աշտարակը միակ շինությունն է եղել, որը հիմնահատակ ավերվել է 1679 թվականի երկրաշարժի ժամանակ և որևէ կերպ չի վերականգնվել:

Աշտարակը մանրամասն նկարագրել է 17-րդ դարում Երևան այցելած ֆրանսիայի ճանապարհորդ Ժան Շարդենը. «Եպիսկոպոսարանի մոտ գտնվում է սրբատաշ քարերով կառուցված հնագույն մի աշտարակ: Ես չկարողացա իմանալ ո'չ նրա կառուցման տարին, ո'չ էլ այն մասին, թե ով և ինչ նպատակով է այն կառուցել: Նրա արտաքին պատերին կան արձանագրություններ, որոնք նման են հայկական տառերի, բայց հայերը չեն կարող դրանք կարդալ: Այս աշտարակը հին է և ունի բացարձակ առանձնահատուկ ճարտարապետություն: Նրա ներսը բոլորովին դատարկ է, շուրջը կան շատ ավերակներ, որոնց դասավորությունից դատելով՝ կարելի է եզրակացնել, որ այդտեղ վանք է եղել, իսկ աշտարակը գտնվել է նրա մեջ»:

Շուրջ երկու դար է, ինչ Երևանի ճարտարապետության հետազոտողները փորձում են ճշտել այս աշտարակի տեղադրման վայրը և նրա տեսքը:

Փաստորեն, Հին Երևանի տարածքում այս աշտարակի լինել-չլինելը մինչև օրս մնում է առեղծվածային:

Երևանի կապույտ մզկիթի Մինարեն

Հին Երևանի ամենաբարձր աշտարակը եղել է Երևանի Կապույտ մզկիթի Մինարեն (Մինարեթը)՝ 24 մետր բարձրությամբ: Այն գտնվել է մզկիթի հարավարևմտյան հատվածում: Ըստ պատմական

աղբյուրների՝ մոլլան ամեն օր բարձրացել է մինարեթի գագաթին և հայտարարել աղոթքի սկիզբը։

Երևանի օդապարիկի աշտարակը

Օդապարիկի աշտարակը գտնվել է Հին Երևանի Ղանթարի շուկայի տեղում (այժմյան Մանկական զբոսայգում)։ Աշտարակի բարձրությունը եղել է 40 մետր։ Աշտարակը այժմ գոյություն չունի։

Երևանի աստղադիտարանը

Աստղադիտարանի շենքը կառուցվել է 1933 թվականին (նախագծվել է 1921 թվականին ճարտարապետ Ա. Թամանյանի կողմից)։

Երևանի առաջին գլխավոր հատակագծով (1924 թվական) նախատեսված «Ուսանողական թաղամասի» կոմպոզիցիայի կենտրոնն է եղել Պետական համալսարանի Աստղաֆիզիկայի ամբիոնի ուսումնական բազան, որտեղ տեղակայված է եղել Երկրի արհեստական արբանյակների Երևանի դիտման կայանը։

Հորինվածքը լուծված է ուղղանկյուն հատակագծով և շարժական գմբեթով՝ գլանաձև միմյանց համակցված ծավալներով։ Ուղղանկյան ծավալը երկհարկանի է, առաջին հարկում ընդարձակ լսարան է և աշխատասենյակներ, երկրորդ հարկում հարթակ է՝ դիտման բոլոր սարքերով։ Աստղադիտակը (տրամագիծը 6մ) տեղադրված է հարթակով պարփակված գլանաձև ծավալի մեջ, ուր բարձրանում է պարուրաձև մի սանդուղք։

Երևանի հեռուստաաշտարակը

Երևանի հեռուստաաշտարակի բարձրությունը 311,7 մետր է. այն բարձր է Փարիզի նշանավոր Էյֆելյան աշտարակից։ Աշխարհագրական դիրքով համարվում է ամենաբարձր աշտարակներից մեկը։ Աշտարակի վրա ծախսվել է 1850 տոննա մետաղ այն դեպքում, երբ Էյֆելյան աշտարակի վրա ծախսվել է ընդամենը 9 հազար տոննա։ Աշտարակի կենտրոնական մասում մինչև 211 մետր բարձրությունը ձգվում է 4 մետր տրամագծով սնամեջ խողովակ, որի մեջ տեղադրված են վերելակները, կապի մալուխները, աստիճանները։ Այնուհետև մինչև 300 մետրը խողովակի տրամագիծը նեղանում է և դառնում 3մ։ 71 և 131 մետր բարձությունների վրա երկու տեխնիկական հրապարակներն են՝ 170 և 350 քառակուսի մետր հարթակներով, որտեղ տեղադրված են վերելակային մեքենաները և ռադիոռելեային գծերի սարքավորումները։ Երկու արագընթաց վերելակները սպասարկող անձնակազմին և հյուրերին կարճ ժամանակում հասցնում են 140 և 275 մետր բարձրություններում գտնվող դիտահրապարակները։

Կառավարության շենքի աշտարակը և ժամացույցը

Հանրապետության հրապարակի կառավարական շենքն ունի ասիմետրիկ ճարտարապետական-հատակագծային լուծում: Անկյունային մասերը շեշտված են ճարտարապետական մոնումենտալ շքամուտքերով և հրապարակի վրա տեղադրված աշտարակով, որն ունի կամարով ընդգծված թաղակապ անցում դեպի բակ: Աշտարակի գմբեթային հատվածը կանգնած է 20 սյուների վրա: Ճարտարապետական հորինվածքում սքանչելիորեն օգտագործված են դասական համաչափությունները, ազգային ճարտարապետական ձևերը, որին համապատասխանում է նաև հարդարանքի կենտրոնից եռաստիճան նվազումը:

Հանրապետության հրապարակի կառավարական շենքի ժամացույցը պատրաստվել է Մոսկվայում: 1941 թվականի հուլիսին տեղափոխվել է Երևան: Թվատախտակի տրամագիծը 4 մետր է, մեծ սլաքի երկարությունը՝188սմ, փոքրինը՝ 170սմ: Ճշգրտության աստիճանը մեծ է, 24 ժամվա ընթացքում տատանվում է 2 կամ 3 վայրկյանի տարբերությամբ:

Երևանի քաղաքապետարանի աշտարակը և ժամացույցը

Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի աշտարակի բարձրությունը 50 մետր է: Քառակողմ աշտարակի՝ դեպի փողոց նայող կենտրոնական մասում հայկական ճարտարապետական զարդանախշերով փորագրված է «Երևան», որի գլխավերևում քանդակված է խաղաղություն խորհրդանշող աղավնու պատկերը: Աշտարակի բարձրադիր հատվածների խորշերում առկա են կամարաձև և ուղղանկյուն փոքր պատուհաններ: Աշտարակի ամենաբարձրադիր մասը ապակեպատ է, որտեղից բացվում են չորս պատշգամբներ դեպի քաղաքի տարբեր կողմերը:

Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի աշտարակի վրա է գտնվում Կառավարական շենքի աշտարակի ժամացույցից իր մեծությամբ երկրորդ՝ տեխնիկական բարդ լուծումներով ժամացույցը: Այն տեղադրված է աշտարակի 13-րդ հարկի բարձրությամբ (39-40մ): Ժամացույցը ոչ միայն ցույց է տալիս օրվա ճշգրիտ ժամը, այլև ամենժամյա զողանջով հնչեցնում է «Էրեբունի-Երևան» երաժշտությունը:

Երևանի «Մայր Հայաստան» հուշարձան

«Մայր Հայաստան» հուշարձանի կառուցման աշխատանքները սկսվել են 1950թ., ավարտվել՝ 1967թ.: Հաղթանակի և խաղաղության խորհրդանիշ հանդիսացող հուշարձանի ձևը, մասշտաբը, բարձրությունը պայմանավորված է եղել տեղանքի ընտրությամբ՝ Քանաքեռի սարահարթի ուղիղ եզրին՝ ներկայիս Մ. Մաշտոցի պողոտայի առանցքով:

Հուշարձանը բաղկացած է երկու մասից՝ պատվանդանից և արձանից (ճարտարապետ Ռ. Իսրայելյան, քանդակագործ Ա. Հարությունյան)։ Պատվանդանի մեջ տեղավորված է «Հաղթանակի» թանգարանը, որի մուտքի կամարը երիզված է տասնինը վարդյակներով, որոնցից ոչ մեկը չի կրկնում մյուսին։ Քանդակային դեկորը կրում է որոշակի գործնական բնույթ, ինչպես օրինակ, ջրահեռացման ելուստները կամ բուսական զարդաքանդակներում պատկերված խորհրդային զինանշանները, որոնց ելուստները միաժամանակ հենարաններ են դրոշների համար։

«Մայր Հայաստանի» արձանը կանգնեցված է ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով կառուցված հսկայածավալ պատվանդանի վրա։ Պատվանդանի չափերից և ձևից ելնելով էլ հենց որոշվել է քանդակի չափերը, նրա խորանարդակերպ ծավալները, գծանկարչական ուրվագծերը։

Տեղադրված լինելով քաղաքի ամենաբարձր կետերից մեկում՝ հուշարձանը իշխում է քաղաքի վրա և տեսանելի է տարբեր հատվածներից։

Այն 1951 թվականին արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի։

Երևանի հեղափոխության հուշասյուն

Հուշարձանը նվիրված է Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին՝ 1967թ.։ Այն գտնվում է Ազատության պողոտայի վրա՝ Քանաքեռի սարահարթի բարձունքին, որտեղից բացվում է Արարատ լեռան համանկարի վրա տարածվող Երևան քաղաքի համայնապատկերը (ճարտարապետներ՝ Ս. Գուրզադյան, Ջ. Թորոսյան)։

Հուշարձանը ուղղանկյուն, միմյանց նկատմամբ ուղղահայաց երկու հարթակից ընդարձակի վրա տեղադրված քառանիստ, վերսլաց կոթող է, որի բարձրությունը 65 մետր է։ Հուշարձանի վերնամասը պսակված է ուրարտական արվեստին բնորոշ «Կենաց ծառ» խորհրդանշող կերտվածքով։ Կոթողից ոչ հեռու Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատմանը նվիրված ինքնատիպ «թանգարան» է՝ աստիճանավոր հիմքի վրա կանգնեցված մի շինություն, որի ծածկի ներքին մակերեսներին դրվագված են Հայաստանի անցյալն ու ներկան ներկայացնող համապատասխան հիշատակագրեր։

Հուշահամալիր Մեծ եղեռնի զոհերին

Հուշահամալիրը նվիրված է Մեծ եղեռնի զոհերի հիշատակի 50-ամյակին, որը կառուցվել է 1967 թվականին Ծիծեռնակաբերդի զբոսայգում։ Այն դարձել է Երևան քաղաքի ճարտարապետական կերպարի անբաժանելի մասը՝ մտնելով աշխարհի տարբեր կողմերում ապրող հայերի հոգու և էության մեջ՝ որպես նրա կյանքի ողբերգական և հերոսական պատմության էջերի, գոյատևման ու հավերժացման պայքարի խորհրդանիշ, որպես սրբավայր և ուխտատեղի (նախագծի ճարտարապետներն են Ա. Թարխանյանը և Ս. Քալաշյանը)։

Հուշարձանախումբն իրենից ներկայացնում է Ծիծեռնակաբերդի բարձունքի բազալտապատ հարթակի վրա վեր խոյացող 40-մետրանոց սլաքաձև երկմասանի

հուշահամալիր՝ Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը և հայ ժողովրդի վերածնունդը խորհրդանշող կոթողը: Կողքին գտնվում է հուշասրահը՝ հարթակի ընդհանուր մակարդակից մեկ և կես մետր ցածր բազալտե 12 թեքված մույթերով բոլորաձև կոթող («Հավերժության տաճար»), որի ցածրադիր կենտրոնական մասում՝ պղնձաձույլ շրջանակում, վառվում է հավերժական կրակը:

Հուշահամալիրն արդի հայ ճարտարապետության փայլուն նվաճումներից է, օրգանապես շաղկապված է տեղանքին և միջավայրին, ընկալվում է շրջակա տարածքից ոչ միայն ծավալատարածական ընդհանուր հորինվածքով, այլև զուսպ ձևերով, ուրվանկարով, գույնով, մասշտաբով և իր էությամբ: Ճարտարապետական ծավալների համամասնությունը, խստությունը, հանդիսավորությունը, մոնումենտալությունը ապահովում են ողջ համալիրի հորինվածքային յուրահատկությունը:

Հուշարձան «Շինարար արծիվ»

«Շինարար արծիվ» հուշարձանը կառուցվել է 1966 թվականին Զվարթնոց օդանավակայանից դեպի Երևան ընթացող խճուղու սկզբնամասում (ճարտարապետ՝ Լ. Իսրայելյան, քանդակագործ՝ Ա. Հարությունյան): Այն խորհրդանշում է քաղաքի մուտքը հարավ-արևմուտքից՝ Էջմիածին քաղաքի կողմից:

Վերսլաց երեք տուֆակերտ կոթողները միմյանց միանում են պղնձաձույլ արծվաքանդակով:

«Երևան» հուշարձան

Երևան քաղաքի հյուսիսային կողմից քաղաքի մուտքը խորհրդանշող հուշարձանը կառուցվել է 1987 թվականին ճարտարապետ Գ. Ղամբարյանի կողմից: Այն գտնվում է Սևան խճուղու սկզբնամասում՝ Ավան-Քանաքեռ ճամփաբաժանում:

Տուֆակերտ հուշարձանը քառանկյուն է, որի բոլոր կողմերում տարբեր լեզուներով գրված է «Երևան»:

Երևան քաղաքի հուշարձանների և ցայտաղբյուրների ցանկը

		Հուշարձան/ ցայտաղբյուր	Գտնվելու վայրը
	Աջափնյակ		
1	Անուշ և Սարո	Հուշարձան	Հովհաննես Թումանյանի անվ. զբոսայգի
2	Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների	Հուշարձան	Սեբաստիայի և Միրաքյան փող. միջնամասում
3	Գևորգ Չաուշ	Հուշարձան	
4	Թեհլերյան Ս.	Հուշարձան	
5	Լոռեցի Սաքո	Հուշարձան	
6	Մեծ եղեռնի Սեբաստիայի զոհերին	Հուշարձան	Գ. Զոհրապ և Ա. Սարգսյան փող. խաչմերուկ
7	Վ. Սարոյան	Հուշարձան	հ. 138 դպրոցի առջև
	Ավան		
1	Արցախյան պատերազմում զոհված երկրապահների	Հուշարձան	
2	Երևանի հյուսիսային մուտք	Հուշարձան	Սևանի խճուղու սկզբնամասում , Ավան–Քանաքեռ ճամփաբաժանում

3	Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	Հուշարձան	Գերեզմանոցի հիմնական (մեծ) հատվածում
4	Ընտանիք	Հուշարձան	
5	Ա.Իսահակյան	Հուշարձան	
6	Վահագն Վիշապաքաղ	Հուշարձան	
7	Դ. Վարուժան	Հուշարձան	
	Արաբկիր		
1	Ղ. Աղայան	Հուշարձան	Կիևյան փող. 9, թիվ 63 դպրոցի առջև
2	«Արաբկիր» վերածննդի	Հուշարձան	
3	Արագիլներ	Հուշարձան	
4	Զարյան Ն.	Հուշարձան	Արաբկիր համայնք Ա. Բակունցի փող. 3, թիվ 130 դպրոցի առջև
5	Ծովակալ Իսակով	Հուշարձան	
6	Մարշալ Բաղրամյան	Հուշարձան	
7	Ա. Շիրվանզադե	Հուշարձան	Վաղարշյան փող. 24/17, թիվ 21 դպրոցի առջև
8	Վահագն Վիշապաքաղ	Հուշարձան	Վաղարշյան փող. 12
9	Տեր–Աստվածատրյան	Հուշարձան	Հրազդանի ձախ ափին, Քանաքեռ ՀԷԿ–ի տարածքում
10	Լ. Տոլստոյ	Հուշարձան	Ազատության պող. 5, թիվ 128 դպրոցի առջև
11	Ռաֆֆի	Հուշարձան	Կոմիտասի պող. 37, թիվ 36 դպրոցի առջև
12	Հ. Օրբելի	Հուշարձան	
13	2750-ամյակին	Ցայտաղբյուր	
	Դավթաշեն		
1	Երկրորդ աշխարհամարտում զոհված դավթաշենցիների	Հուշարձան	Դավթաշենի 10-րդ փող.
2	Տ. Պետրոսյան	Հուշարձան	
3	Քրիստոնեության 1700–ամյակին	Ցայտաղբյուր	
	Էրեբունի		
1	Արգիշտի արքա	Հուշարձան	
2	Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների	Հուշաձան–կոթող	
3	Երկրորդ աշխարհամարտում զոհված	Հուշարձան	
4	Մեծ եղեռնի զոհերին	Հուշաղբյուր	Նուբարաշենի խաչուղի
5	Մեծ եղեռնի զոհերին	Հուշարձան	Գաջեզործների փող.
6	Սասունցի Դավիթ	Հուշարձան	Սասունցի Դավթի հրապարակ
	Կենտրոն		
1	Խ. Աբովյան	Հուշարձան	
2	Հ. Այվազովսկի	Հուշարձան	
3	Անմար կրակ	Հուշարձան	
4	Բաբաջանյան Ա.	Հուշարձան	
5	Բարեկամության ձեռքեր	Հուշարձան	Օղակաձև զբոսայգում
6	Մ. Գոշ	Հուշարձան	
7	Ա. Գրիբոյեդով	Հուշարձան	
8	Լ. Ենգիբարյան	Հուշարձան	
9	Երևան և Կարարա քաղաքների բարեկամության	Հուշարձան	Օղակաձև զբոսայգում
10	Ս. Զաքյան	Հուշարձան	
11	Զորավար Անդրանիկ	Հուշարձան	
12	Երկրորդ աշխարհամարտում զոհված բժշկական ինստիտուտցիներին	Հուշարձան	
13	Երկրորդ աշխարհամարտում զոհված Գյուղատնտեսական ինստիտուտի դասախոսների և ուսանողների	Հուշարձան	Վ. Տերյան փող. 74, Գյուղատնտեսական ակադեմիայի մոտ

14	Երկրորդ աշխարհամարտում Հայաստանում նահատակված հունգար ռազմագերիների և Հունգարիայում զոհված հայ մարտիկների	Հուշարձան	
15	Ա. Թամանյան	Հուշարձան	Օղակաձև զբոսայգում
16	Հ. Թումանյան	Հուշարձան	
17	Ա. Իսահակյան	Հուշարձան	
18	Ա. Խաչատրյան	Հուշարձան	
19	Մ. Խորենացի	Հուշարձան	Ալեք Մանուկյան փող. 1, Երևանի պետական համալսարանի բակում
20	Ծովակալ Իսակով	Հուշարձան	
21	Կարա-Բալա	Հուշարձան	
22	Կոմիտաս	Հուշարձան	Օղակաձև զբոսայգում
23	Կ. Հալաբյան	Հուշարձան	
24	Հայ և հրեա ժողովուրդների եղեռնի զոհերի	Հուշարձան	
25	Հայ և ասորի ժողովուրդների՝ 1915թ. անմեղ զոհերի	Հուշարձան	
26	Մամիկոնյան Վ.	Հուշարձան	
27	Հարություն քահանա Շմավոնի	Հուշարձան	
28	Երկրորդ աշխարհամարտում զոհված համալսարանականների	Հուշաղբյուր	
29	Երկրորդ աշխարհամարտում զոհված պիոներների	Հուշաքար	
30	Երկրորդ աշխարհամարտում զոհված պոլիտեխնիկականների	Հուշաղբյուր	
31	Մեծ եղեռնի և Սպիտակի երկրաշարժի զոհերի	Հուշաղբյուր	
32	Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20 – ամյակին	Հուշարձան	Մ. Խորենացու, Գ. Լուսավորչի և Զաքիան փողոցների միջև, Մանկական զբոսայգու կենտրոնական ծառուղում
33	Հայաստանում սովետական կարգերի հաստատման 30-ամյակին	Հուշարձան	Ծովակալ Իսակովի պող.
34	Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակին	Հուշարձան-կոթող	
35	Մեծ եղեռնի զոհերի	Հուշարձան	
36	Հ. Մեղապարտ	Հուշարձան	Գրքի պալատի առջև՝ Իսահակյան փող. կողմից
37	Մեսրոպ Մաշտոց և Կորյուն	Հուշարձան	
38	Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարթև	Հուշարձան	
39	Լ. Մխչյան	Հուշարձան	
40	Ա. Մյասնիկյան	Հուշարձան	Գ. Լուսավորչի և Բեյրութի փողոցների միջև, Թատերական զբոսայգու եզրին
41	Յոթ աղբյուր	Ցայտաղբյուր	
42	Մ. Նալբանդյան	Հուշարձան	
43	Նար–Դոս	Հուշարձան	Հ. 14 դպրոցի առջև
44	Ս. Շահումյան	Հուշարձան	
45	Ա. Շիրակացի	Հուշարձան	
46	Ե. Չարենց	Հուշարձան	Օղակաձև զբոսայգում
47	Պեպոյի	Հուշարձան	Մ. Խորենացու և Գ. Լուսավորչի փող. միջև, Թատերական զբոսայգում
48	Տ. Պետրոսյան	Հուշարձան	
49	Ջրավաճառ պատանին	Հուշարձան	

50	Թ. Ռոսլին	Հուշարձան	
51	Ա. Սախարով	Հուշարձան	
52	Սայաթ–Նովա	Հուշաղբյուր	
53	Մ. Սարյան	Հուշարձան	Մ. Մաշտոցի և Մ. Բաղրամյան պողոտաների ու Զորյան փող. հանգույցում
54	Գ. Սունդուկյան	Հուշարձան	Գր. Լուսավորչի փող. 6, գրողի անունը կրող թատրոնի շենքի մոտ
55	Ա. Սպենդիարյան	Հուշարձան	
56	Ն. Ստեփանյան	Հուշարձան	Մ. Խորենացու, Գ. Լուսավորչի և Զաքիյան փող. միջև , մանկական զբոսայգում
57	Վանեցի աղջիկը	Հուշարձան	
58	Վերածնված Հայաստան	Հուշարձան	
59	Գ. Տաթևացի	Հուշարձան	
60	Վ. Տերյան	Հուշարձան	Օղակաձև զբոսայգում
61	Ա. Տիգրանյան	Հուշարձան	Օղակաձև զբոսայգում
62	«Տղամարդիկ»	Հուշարձան	
63	Ֆրիկ	Հուշարձան	
64	1937 բռնադատվածներին	Հուշաքար	
65	Վարդան Մամիկոնյան	Հուշարձան	Օղակաձև զբոսայգում
	Մալաթիա–Մեբաստիա		
1	Երևանի հարավարևմտյան մուտքը	Հուշարձան	
2	Վ. Զատիկյան	Հուշարձան	
3	Զորավար Անդրանիկի	Հուշարձան	
4	Հին և նոր Մալաթիա	Հուշարձան	
5	Գ. Նարեկացի	Հուշարձան	
6	Հ. Շիրազ	Հուշարձան	
7	Վահագնի	Հուշարձան	
8	Վ. Տերյան	Հուշարձան	
	Նոր Նորք		
1	Հայկ Բժշկյանցի	Հուշարձան	
2	Հայկ Նահապետի	Հուշարձան	
3	Նոր Նորք վարչական շրջանի 40–ամյակին	Հուշարձան	
4	Պ. Սաֆյան	Հուշարձան	
5	Տիգրան Մեծի	Հուշարձան	
6	Տորք Անգեղի	Հուշարձան	
	Նուբարաշեն		
1	Ղ. Ալիշան	Հուշարձան	
2	Երկրորդ աշխարհամարտում զոհված նուբարաշենցիների	Հուշարձան	
3	Թովմաս Թուխմանյանի և մի խումբ զոհված չնքուշցիների	Հուշարձան	
4	Նուբարաշեն Ն.	Հուշարձան	
	Շենգավիթ		
1	Երկրորդ աշխարհամարտում զոհված ռազմիկներին համագյուղացիներից	Հուշարձան	
2	Երկրորդ աշխարհամարտում զոհված օդաչուներին	Հուշարձան	
3	Ս. Սպանդարյան	Հուշարձան	
	Քանաքեռ–Զեյթուն		
1	Խ. Աբովյան	Հուշարձան	
2	Ազատամարտիկ Հարությունին	Ցայտաղբյուր	
3	Անհայտ զինվորների գերեզման	Հուշարձան	
4	Մ. Ավետիսյան	Հուշարձան	
5	Արցախյան պատերազմում	Հուշաքար	

	զոհված Զեյթունի ազատամարտիկների		
6	Դավիթ Անհաղթի	Հուշարձան	
7	Երկրորդ աշխարհամարտում զոհված քանաքեռցիներին	Հուշարձան	
8	Հայաստանի և Էստոնիայի բարեկամության	Հուշաշբյուր	
9	Հավերժ փառք Հայաստանի սահմաններում և Արցախի ազատագրման համար ընկած ՄՀՆՋ մարտիկների	Հուշարձան	
10	Մայր Հայաստան	Հուշարձան–կոթող	
11	Մոնթե Մելքոնյանի	Հուշարձան	
12	Շուշիի ազատագրման 15-ամյակին	Հուշարձան–կոթող	
13	Պատերազմին՝ ոչ	Հուշարձան	
14	Պ. Սևակ	Հուշարձան	